ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄՈՆՊԵԼԻԵ ՔԱՂԱՔԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

30.10.2018 13:34

ՀՀ փաստաբանների պալատում հոկտեմբերի 29-ին հյուրընկալվել է Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի փաստաբանների միության պատվիրակությունը՝ միության նախագահ Բերնարդ Բերալի գլխավորությամբ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ողջունել է հյուրերին Փաստաբանների պալատում: Նա նշել է, որ ջերմությամբ է հիշում Մոնպելիե կատարած իր այցը, որտեղ քննարկվել են բազմաթիվ հարցեր կապված փաստաբանության և իրավունքի հիմնահարցերի շուրջ: «**Մենք Ֆրանսիային համարում ենք մեր բարեկամը և միջազգային համագործակցության ոլորտում ամենակտիվ հարաբերությունները հենց Ֆրանսիայի հետ են: Անգամ Հայաստանի փաստաբանական դպրոցի մոդելը վերցված է ֆրանսիականից**»,-նշել է Արա Զոհրաբյանը:

Մոնպելիեյի փաստաբանների միության նախագահ Բերնարդ Բերալը շնորհակալություն է հայտնել Փաստաբանների պալատին ջերմ ընդունելության համար և նշել է, որ Հայաստանի փաստաբանների պալատի հետ համագործակցությունը սկսվել է վաղուց: Նա նշել է նաև, որ այդ հարաբերությունների զարգացման գործում մեծ ավանդ ունի Մոնպելիեյի փաստաբանների միության նախկին նախագահ Լյուք Ֆիրքյաչարյանը: «**Շատ ուրախալի է, որ Ֆրանկոֆոնիայի օրերին հաջորդում է մեր այս միջոցառումը: Մեր հարաբերությունները և մեր գործունեությունը համապատասխանում է Ֆրանկոֆոնիայի «ապրել միասին» կարգախոսին**»,- հայտնել է պարոն Բերալը:

Հանդիպմանը բացման խոսքով հանդես է եկել նաև Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոնաթան Լաքոտը, ով նշել է, որ իր բացառիկությամբ տարբերվող Ֆրանկոֆոնիայի օրերին ձեռք բերված հաջողությունները անհրաժեշտ է կապիտալիզացնել և զարգացնել:

Մասնագիտական քննարկումների ընթացքում հայ մասնագետները ֆրանսիացի գործընկերներին ներկայացրել են օտարերկրյա ներդրումների իրավական կարգավորումներին վերաբերող մանրամասներ:

Ավարտին՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Մոնպելիեի փաստաբանների միության և նույն միության Մարդու

իրավունքների ինստիտուտի միջև կնքվել է մարդու իրավունքների պաշտպանության խթանմանն ուղղված համագործակցության համաձայնագիր:

ՓՐԵՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF AD

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })